

**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի նիստի

Մասնակցում էին նիստի անդամները և <<Մուսալեռի բարի կամք>> սոցիալական հասարակական կազմակերպության նախագահ Վաչագան Թամազյանը:

**Օրակարգում՝**

1. 2015թ. ընթացքում հանձնաժողովի կատարած աշխատանքների և 2016թ. աշխատանքային ծրագրի քննարկում:
2. <<Մուսալեռի բարի կամք>> սոցիալական հասարակական կազմակերպության կողմից մարզի Արցախյան ազատամարտի հաշմանդամներին անվասայակների տրամադրում:

/Զեկ՝ Լ.Մուրադյան/

Ողջունելով ներկաներին, տիկին Մուրադյանը տեղեկացրեց, որ 2016 թվականը հայտարարվել է ՀՀ-ում հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար հնարավորությունների տարի, հետևաբար հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացման ընթացքում ծագած խնդիրների լուծման, հավասար պայմանների, հասարակական կյանքում նրանց առավելագույնս ներգրավվածության ապահովման, սոցիալական հիմնախնդիրների լուծմանն աջակցելու ուղղությամբ անհրաժեշտ է իրականացնել համագործակցված աշխատանք:

<<Մուսալեռի բարի կամք>> սոցիալական հասարակական կազմակերպության նախագահ Վաչագան Թամազյանը ներկաներին տեղեկացրեց, որ իր կազմակերպությունում առկա է հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված 10 անվասայակ և պատրաստակամություն հայտնեց դրանք տրամադրել Արցախյան ազատամարտի ընթացքում հաշմանդամ դարձած անձանց: Վաչագան Թամազյանը ներկաներին տեղեկացրեց նաև, որ առաջիկայում <<Մուսալեռի բարի կամք>> հասարակական կազմակերպությունը կկազմակերպի ՀՀ Արմավիրի մարզի հաշմանդամություն ունեցող անձանց նաև տարբեր հենաշարժողական պարագաների տրամադրումը:

Նիստի ավարտին տիկին Մուրադյանը բոլորի անունից շնորհակալություն հայտնեց Վաչագան Թամազյանին՝ կատարված աշխատանքի համար և հույս հայտնեց, որ այդ համագործակցությունը շարունակական կլինի:

**Մարզպետի տեղակալ՝**

**Լ.Մուրադյան**

Արձանագրող՝ Հ. Հարությունյան